



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՄ ԳՅՈՒՂԸ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Տեղեկացնում ենք, որ ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագիրը հայտարարում է գյուղատնտեսության ոլորտում փոքր բիզնեսի համաֆինանսավորման մրցույթ, որն ուղղված է ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Սյունիքի մարզերի ոչ քաղաքային բնակավայրերում, ինչպես նաև Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի թվով 34 բնակավայրերում գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունեցող կամ նոր ստեղծվող փոքր բիզնեսների աջակցմանը, արդյունավետության բարձրացմանը, վերազինմանը և վերապրոֆիլավորմանը, նորարարական գաղափարների աջակցմանը:

Նախագծի իրականացումը թույլ կտա նշված բնակավայրերում զարգացնել գյուղատնտեսական մթերքների վերամշակումը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում առաջարկվող ծառայությունները, ինչը կնպաստի համայնքների սոցիալ-տնտեսական կայունությանը, կանանց և երիտասարդների զբաղվածության մեծացմանը, աղքատության մակարդակի նվազեցմանը, կենսամակարդակի բարելավմանը, գործարար միջավայրի խթանմանը, գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև երկրի պարենային անվտանգությանը:

ՄԱԶԾ ԿՀ-ն համաֆինանսավորում է ներկայացվող և հաղթող Ծրագրի ընդհանուր բյուջեի 70%-ը: Ծրագրի առավելագույն արժեքը պետք է կազմի 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

«Կայուն համայնքներ» ծրագիրը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից, իրականացվում ՄԱԶԾ-ի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

«Իմ Գյուղը» նախագծի գյուղատնտեսության ոլորտում փոքր բիզնեսի համաֆինանսավորման ծրագրին կարող են դիմել միայն ՀՀ քաղաքացիություն ունեցող այն անձինք

- ովքեր ունեն գործարար նախաձեռնությունների ծրագիր կապված գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և սննդի արտադրության հետ,
- ունեն նորարարական ծրագրեր գյուղատնտեսության զարգացմանն ու արդիականացմանը խթանելու համար,
- ովքեր ունեն տվյալ բնակավայրում իրենց սեփականությունը հանդիսացող տարածք՝ գործունեություն ծավալելու համար,
- ովքեր պատրաստակամ են ներդնել ֆինանսական միջոցներ Նախագծի ընդհանուր արժեքի 30%-ի չափով,
- ովքեր Նախագծի մեկնարկին կլինեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- ովքեր նվազագույնը երեք տարի պարտավորվում են իրականացնել Նախագիծը,
- ովքեր պարտավորվում են իրականացնել ՄԱԶԾ ԿՀ ծրագրի կողմից մշակված և ծառայությունների բարելավմանն ուղղված դրույթները, մասնակցել վերապատրաստման դասընթացներին ու միջոցառումներին,
- ովքեր չեն հանդիսանում ՄԱԶԾ ԿՀ կողմից տվյալ պահին իրականացվող ընթացիկ այլ նախագծերի շահառու:

Կարևոր.

Հայտատուները (յուրաքանչյուր ընտանիքից մեկ անձ) կարող են ներկայացնել միայն մեկ նորարարական նախաձեռնության ծրագիր համաֆինանսավորման համար:

- *Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է առցանց լրացնել և կցել.*
 - հայտադիմում,
 - անձնագիր/նույնականացման քարտի պատճեն (1-ին և 2-րդ էջերը),
 - սեփականության վկայականի պատճեն

Նշված փաստաթղթերը լրացնելու և տրամադրելու համար հարկավոր է հետևել <https://form.jotform.com/SustainableCommunities/myvillage> ՄԱԶԾ պաշտոնական հղմանը:

Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետն է **ապրիլի 6-ը**՝ ժամը 18:00-ն: Հայտատուների ընտրությունը կկատարվի սահմանված չափանիշներին համաձայն՝ մրցութային հանձնաժողովի կողմից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ`

- Ժամկետանց և ոչ լիարժեք հայտերը չեն դիտարկվելու,
- Ծրագիրը կապ կհաստատի միայն առաջին փուլով ընտրված մասնակիցների հետ:

Հարցերի համար կարող եք զանգահարել +(374 44) 600 125 բջջային հեռախոսահամարին, աշխատանքային օրերին (երկուշաբթիից-ուրբաթ) ժամը 10:00-17:00: